«Շիրակի ուսուցիչների միություն» գիտակրթական կենտրոն ՀԿ վերապատրաստող կազմակերպություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա Դպրոցի խորհրդակցական մարմինները և կառավարման խորհուրդն արդի կրթական մարտահրավերների պայմաններում

Կատարող՝ Թաթուլ Արարատի Խաչատրյան

Գյումրու թիվ 25 հիմնական դպրոց, առարկա՝ պատմություն

Ղեկավար՝ Կարինե Ալեքսանյան

ԳՅՈՒՄՐԻ 2023թ.

Բովանդակություն

Ներածություն…….……...3

Գլուխ առաջին-Խորհրդակցական մարմինների գործունեության արդի օրենսդրական հիմքերը……----------5

Գլուխ երկրորդ: Խորհրդակցական մարմինների գործունեության առկա խնդիրները……----------8

Գլուխ երրորդ: **Դպրոցի կառավարման խորհուրդի դերը դպրոցի կառավարման գործում**----------

Եզրակացություններ և առաջարկություններ……...14

Օգտագործված էլեկտրոնային աղբյուրներ և տպագիր գրականություն.....15

Ներածություն

Թեմայի այժմեականությունը: Արդեն երկար ժամանակ է, որ դպրոցի կառավարմանն այս կամ այն չափով մասնակցում են խորհրդակցական մարմինները: Դրանք օրենքով ստեղծված և որոշակի լիազորություններ ունեցող մարմիններ են, որոնք ընտրվում են որոշակի ժամկետով և ունեն հստակ լիազորություններ: Ներկա կրթական բարեփոխումների և հարափոփոխ աշխարհի պարագայում չափազանց կարևոր է դպրոցի խորհրդակցական մարմինների համակարգված և հետևողական աշխատանքն ի շահ սովորողների բարօրության: Ցավոք առկա խնդիրների պատճառով այդ մարմինները գերազանցապես չեն կատարում իրենց դերը՝ կրելով կամ ձևական բնույթ, կամ դառնալով տնօրենի կցորդը: Հաշվի առնելով այս հանգամանքը խորհրդակցական մարմինների գործունեության ուղղությամբ առկա խնդիրների քննարկումը և լուծումների մատնանշումն ունի կարևոր և այժմեական նշանակություն:

Հետազոտության նպատակի և խնդիրների սահմանումը: Հետազոտության **նպատակն է** ուսումնասիրել հանրակրթության բնագավառում գործող խորհրդակցականմարմինների գործունեությունը, առկա խնդիրներն ու մարտահրավերները և առաջ քաշել լուծումներ, որոնք կիրառելի կլինեն այժմ ու կբարեփոխեն կրթական համակարգի այս ոլորտը: Հետազոտության **խնդիրներն են.**

ա. ուսումնասիրել դպրոցական խորհրդակցական մարմինների արդի վիճակը,

բ. վեր հանել առկա առավել հրատապ խնդիրները,

գ. ներկայացնել առաջնային խնդիրների լուծման վերաբերյալ փաստարկված մոտեցումներ և առաջարկություններ

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը դպրոցական խորհրդակցական մարմիններն են, առարկան՝ դրանցում առկա խնդիրներն ու լուծման ուղիները:

Հետազոտության մեթոդիկան: Օրենսդրական ակտերի և գրականության հիման վրա իրականացնելու ենք հետազոտական աշխատանք՝ վերլուծական և քննադատական մեթոդների օգնությամբ:

Ցավոք թեման գրեթե ուսումնասիրված չէ մեր իրականության մեջ, ինչը ստեղծում է հետազոտության հետ կապված բարդություններ, սակայն միևնույն ժամանակ հնարավորություն ընձեռում նոր և քիչ ուսումնասիրված, սակայն մեծ կարևորություն ներակացնող այս թեման քննել նոր լույսի տակ:

Գլուխ առաջին

Խորհրդակցական մարմինների գործունեության արդի օրենսդրական հիմքերը

Առկա օրենսդրական հիմքով խորհրդակցական մարմինները ստեղծվել են հետևյալ նպատակով. հանրակրթական դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև զարգացման ծրագրերին աջակցելու և համայնքի հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական խորհուրդ, առարկայական մեթոդական միավորումներ, ծնողական, աշակերտական, հոգաբարձուների խորհուրդներ: Հանրակրթական դպրոցում կարող են ձևավորվել խորհրդակցական կամ խորհրդատվական այլ մարմիններ:

Ցավոք դպրոցում խորհուրդների գործունեությունը ոչ մի կերպ չի նպաստում ոչ կրթական գործունեության կազմակերպման, ոչ էլ համայնքի հետ աշխատանքին: Խորհուրդները՝ այդ թվում և մանկավարժական խորհուրդն իրենցից ներկայացնում են տնօրենին ենթակա կամ նրանց կցված մարմիններ, որոնք ոչ միայն չեն կատարում իրենց դերը, այլև նպաստում են իրենց առանձին անդամների գործունեության չեզոքացմանը:

Մանկավարժական խորհուրդը կազմավորվում է մանկավարժական կոլեկտիվի օգոստոսյան առաջին նիստում: Մանկավարժական խորհուրդը ձևավորվում է տնօրենի հրամանով՝ մեկ ուսումնական տարի ժամկետով: Մանկավարժական խորհրդի անվանական կազմը արձանագրվում է մանկավարժական խորհրդի արձանագրությունների մատյանում: Ցավոք մանկավարժական խորհուրդը գործունեությունը գերազանցապես կրում է ձևական կամ լավագույն դեպքում պասիվ բնույթ, այն չի հանդիսանում քննարկումների, նոր մտքերի ձևավորման և իրագործման մարմին, գտնվում սահմանափակված և պարալիզացված վիճակում:

Հանրակրթական դպրոցի ծնողական խորհուրդը կազմավորվում է դասարանների ծնողական խորհուրդների նախագահներից: Ծնողական խորհրդի նախագահը ընտրվում է փակ քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ: Ծնողական խորհրդի նախագահը մանկավարժական խորհրդի անդամ է: Ծնողական

խորհուրդն ըստ էության հանդիսանում է կրթական գործընթացի պատվիրատուն և օրենսդրական առումով ունի մեծ լիազորություններ դպրոցի կառավարմանը մասնակցելու համար, սակայն ցավոք սրտի այն ևս լիարժեք չի կատարում իր դերը: Ինչպես դասարանական, այնպես էլ համապրոցական խորհուրդի նախագահներն ընտրվում են ուղղորդմամբ, իսկ կառավարման խորհրդում ընդգրկվելիս միայն ձևականորեն մասնակցում են նիստերին՝ լինելով միայն կատարող:

Համադպրոցական հարցերի քննարկման համար ծնողական խորհուրդը հրավիրում է ընդհանուր ժողովներ: Ուսումնական տարվա ընթացքում, համաձայն հանրակրթական դպրոցի ուսումնադաստիարակչական պլանի, հրավիրվում են դասարանականը՝ ոչ պակաս չորս անգամ, համադպրոցականը՝ երկու անգամ: Տնօրենի, ծնողական խորհուրդների և դասղեկների նախաձեռնությամբ կարող են հրավիրվել արտահերթ համադպրոցական և դասարանական ծնողական ժողովներ: Ինչպես տեսնում են ծնողական խորհուրդը կարող է մասնակցել տարատեսակ հարցերի քննարկմանը դպրոցում, սակայն ցավոք այն չի կատարում իր դերը:

Հաստատության աշակերտական ինքնավարության բարձրագույն մարմինը հանրակրթական դպրոցի բարձր դասարանների (6-12-րդ դասարաններ) աշակերտների ընդհանուր ժողովն է, որի նիստերին կարող են մասնակցել նաև ցածր դասարանների աշակերտները: Ցավոք բազմաթիվ խնդիրներ են առկա նաև այս պարագայում: Աշակերտական խորհուրդը ոչ միայն ունի չափազանց կարևոր դեր աշակերտների իրավունքները պաշտպանելու և կրթադաստիարակչական, ժամանցային միջոցառումների կազմակերպման տեսանկյունից, այլև աշակերտներին կրթող, սեփական իրավունքի գիտակցություն դաստիարակող մարմին է:Սակայն իրականում այն ուղղակիորեն կախված է դպրոցի տնօրենից՝ սկսած ֆինանսական ծախսերից մինչև տարատեսակ միջոցառումների իրականացում անհնար է առանց տնօրենի թույլտվության, ուստի խորհուրդը կաշկանդված վիճակում է կամ ուղղակի գործում է ձևական՝ թղթի վրա:

Աշակերտական խորհրդի ներկայացուցիչը, խորհրդակցական ձայնի իրավունքով, մասնակցում է խորհրդի և մանկավարժական խորհրդի այն նիստերին (կամ հարցերի քննարկմանը), որտեղ քննարկվում են աշակերտներին անմիջականորեն վերաբերող հարցեր: Ցավոք աշակերտական խորհրդի՝ այսինքն

ամբողջ աշակերտական համայնքի իրավունքները ոտնահարվում են նաև այս պարագայում:

Խորհրդակցական մեկ այլ մարմին է հոգաբարձուների խորհուրդը: Այն իր գործունեությամբ կարող է նպաստվել դպրոցի արտաքին կապերի զարգացմանը, տարատեսակ ծրագրերի իրականացման և կրթական որակի բարելավմանը, սակայն ցավալիորեն այս մարմինը դպրոցներ մեծ մասում ուղղակիորեն բացակայում է կամ կրում է ֆինանսական աղբյուրի դեր ղեկավարության համար:

Գլուխ երկրորդ

Խորհրդակցական մարմինների գործունեության առկա խնդիրները

Ինչպես տեսանք օրենսդրական առկա կարգավորումներից խորհրդակցական մարմիններին տրվում են լայն լիազորություններ և իրավունքներ, սակայն ցավոք դրանք սահմանափակվում են կառավարչական լծակներ ունեցող դպրոցի տնօրիության կողմից և գործնականում չեն կիրառվում:

Աշակերտական և ծնողական խորհուրդները, ինչպես նաև մանկավարժական խորհուրդը գտնվում են դպրոցի ղեկավարությունից ուղղակի կախվածության կամ ենթակայության մեջ, ուստի հլու կերպով կատարում են իրենց տրված հանձնարարությունները և խնդիրներն չեն ստեղծում:

Առկա օրենսդրությամբ ցավոք նշված մարմինները կախյալ վիճակում են և դրանց գործունեությունը բարեփոխելու և նոր շունչ տալու համար անհրաժեշտ է օրենսդրական նոր կարգավորումներով ընձեռել առավել մեծ ինքնավարություն, պաշտպանել այդ մարմինները լրացուցիչ գործիքներով և զերծ պահել դրանք կողմնակի կամայական միջամտությունից:

Կրթական համակարգում առկա այս խնդրի լուծումն էականորեն կբարելավվի կրթական միջավայրը դպրոցում և նոր, թարմ շունչ կհաղորդի դպրոցում, կստեղծի նոր գաղափարներով ու մոտեցումներով կրթական գործունեությունն առավել հետաքրքիր ու բազմաբովանդակ դարձնելու հնարավորություն, ինչպես նաև զերծ կպահի կրթական գործընթացի բոլոր մասնակիցներին տարատեսակ կամայականություններից և անհարկի միջամտություններից:

Խորհրդակցական մարմինների և դպրոցի տնօրինության ակտիվ ու արդյունավետ աշխատանքի պարագայում հնարավոր է իրացնել դրանց ահռելի պոտենցիալն ու նոր որակներ հաղորդել դպրոցին:

Աշակերտական, ծնողական, մանկավարժական խորհուրդներն ունեն անսպառ կարողություններ և հնարավորություններ, ինչպես դպրոցի և կրթական միջավայրի բարելավմանը նպաստելու՝ այնպես էլ դպրոց-համայնք կապի ամրապնդման տեսնակյունից: Այս հանգամանքները հաշվի առնելով չափազանց կարևոր է վերոհիշյալ մարմինների գործունեությանը նոր խթան հաղորդելը, օրենսդրական

կարգավորումներով դրանց գործունեությունը նոր հիմքի վրա դնելը, դրանց նոր լիազորություններ տալը, ինչպես նաև դրանց ինքնուրույնության բարձրացմանը:

Առկա պայմաններում վերոհիշյալ խորհրդակցկական մարմինների գործունեությունը կախված է դպրոցի ղեկավարության ցանկությունից, այն ուղղորդվում է ու ծառայում միայն նեղ շահերի: Այսպիսի պայմաններում խորհրդակցական մարմինների գործունեությունը կախված է զուտ ղեկավարության բարի կամքից, ուստի այս պայմաններում սրանք գտնվում են կաշկանդված վիճակում ու չեն կարող լիարժեք կատարել իրենց դերը:

Դպրոցի կառավարման խորհուրդի դերը դպրոցի կառավարման գործում

Դպրոցի գործունեության համար չափազանց կարևոր են նաև կառավարման խորհուրդները: Սրանք ի տարբերություն խորհրդակցական մյուս մարմինների ավելի ռեալ և իրական լծակներ ունեն՝ դպրոցի կառավարմանը մասնակցելու համար: Նախ անդրադառնանք կառավարման խորհրդին օրենսդրությամբ տրված լիազորություններին, ապա քննության ենթարկենք խորհուրդների գործունեության հետ կապված օրենսդրական բացերին, ինչպես նաև առկա մյուս խնդիրներին:

Համաձայն Հանրակրության մասին օրենքի Պետական ուսումնական հաստատությունն ունի կոլեգիալ կառավարման մարմին՝ խորհուրդ (այսուհետ՝ խորհուրդ): Օրենսդրությամբ սահմանված կարգով մի քանի հաստատության համար կարող է ձևավորվել նաև միասնական խորհուրդ:

Ինչպես տեսնում ենք նոր կարգով խորհուրդները կարող են լինել նաև միասնական, սա կարող է բերել ինչպես խնդիրների, այնպես էլ որոշակի դրական արդյունքների՝ կախված այն հանգամանքից, թե ինչ որակի կառավարման խորհուրդ կձևավորվի:

Համաձայն Հանրակրթության մասին օրենքի Պետական ուսումնական հաստատության խորհուրդը՝

1) աջակցում է ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարմանը, վերահսկում է զարգացման ծրագրի ժամանակացույցով սահմանված տարեկան գործողությունների իրականացումը, լսում է զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվությունը և տալիս եզրակացություն.

2) հաստատում է դպրոցի կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական, այդ թվում՝ աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները.

3) քննարկում է ուսումնադաստիարակչական գործունեության, այդ թվում՝ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների իրականացման մասին հաշվետվությունները.

4) քննարկում է ներքին և արտաքին գնահատման արդյունքները.

5) լիազորված մարմին է ներկայացնում առաջարկություններ՝ ուսումնական հաստատության գործունեության բնագավառին, նպատակներին և խնդիրներին համապատասխան.

6) հաստատում է իր աշխատակարգը, նիստերի օրակարգը, ժամանակացույցը և ընտրում խորհրդի նախագահ.

7) սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն տրված եզրակացության հիման վրա խորհրդի անդամների (մանկավարժական և ծնողական խորհուրդների դեպքում՝ միայն տվյալ հաստատության մանկավարժական և ծնողական խորհուրդների առաջադրած անդամների) ընդհանուր թվի երկու երրորդի համաձայնությամբ, հիմք ընդունելով լիազոր մարմնի սահմանած կատարողական ցուցանիշներն ու պահանջները, կարող է անվստահություն հայտնել տնօրենին և նրա լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին հիմնավոր առաջարկությամբ դիմել համապատասխան լիազոր մարմնի ղեկավարին.

8) իրականացնում է օրենքով, հիմնադրի կողմից իրեն վերապահված կամ դպրոցի կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

Օրենսդրական առումով Խորհրդի գործունեության հետ կապված էական բացթողումներ բերված մեջբերումներում դժվար է գտնել, սակայն ցավոք Խորհուրդները հաճախ ձևավորվում են տնօրենի կամ վերադասի կամայական մոտեցման կամ ճնշումների տակ, ուստի լիարժեք չեն կատարում իրենց դերը՝ մնալով զուտ տնօրենի կցորդներ, այնինչ բարեխղճորեն ձևավորված և կրթական գործընթացով հետաքրքրված խորհուրդներն իրենց լիազորությունների սահմաններում կարող էին էական դեր խաղալ դպրոցներում՝ նոր շունչ հաղորդելով կրթական միջավայրին:

Չնայած խորհրդի անհամը պարտավոր է բարեխղճորեն մասնակցել նիստերին և կատարել իր պարտականությունները ցավոք այդ մասնակցությունը գերազանցապես կրում է ձևական բնույթ, իսկ երբեմն ընդհանրապես խորհրդի անդամները չեն ներկայացնում նիստերին: Այս իրավիճակը փոխշահավետ է տնօրենի և խորհուրդի անդամների համար, ուստի անկախ տեղի ունեցող փոփոխություններից դրությունը մնում է անփոփոխ:

Ինչպես գիտենք խորհուրդներն ունեն 9 անդամ: Ինչպես նախորդ օրենսդրական կարգավորումներով, այնպես էլ նոր փոփոխություններով կառավարման խորհուրդը գտնվում է չբալանսավորված վիճակում, կազմավորվում է սուբյեկտիվ սկզբունքով և պաշտպանում է որոշակի խմբի շահերը՝ անտեսելով դպրոցն ու կրթական համակարգը:

Համաձայն խոհուրդի ձևավորման կարգի անդամներն առաջադրվում են հետևյալ մարմինների կողմից.

1) Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարը (այսուհետ՝ նախարար),

2) լիազորված մարմինը,

3) մանկավարժական խորհուրդը (միացյալ խորհրդի դեպքում՝ յուրաքանչյուր հաստատության մանկավարժական խորհուրդը),

4) ծնողական խորհուրդը (միացյալ խորհրդի դեպքում՝ յուրաքանչյուր հաստատության ծնողական խորհուրդը)՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներին կից հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների,

5) տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարը:

Թվում է, թե այս սկզբունքով ձևավորված կառավարման խորհուրդը հնարավորինս հավասարակշռված և պիտի սպասարակի կրթության բոլոր շահառուների ու պետության շահերը, սակայն ինչպես կտեսնենք ներքևում դա այդպես չէ: Եթե կառավարման խորհրդի անդամներին նշանակելու կամ ընտրելու հարցում օրենքում առկա խնդիրներն այնքան էլ մեծ չեն, ապա խորհրդի անդամներ ընտրելու համամասնության մեջ առկա է լուրջ բացթողում: Այսպես.

7. Նախարարը մարզային և Երևանի քաղաքապետարանի ենթակայության հաստատությունների առանձին խորհուրդներում առաջադրում է մեկական անդամ, իսկ միացյալ խորհրդում՝ երկուական անդամ:

8. Նախարարության ենթակայության հաստատություններում 4 անդամ առաջադրում է նախարարը և 1-ական անդամ՝ ՀՀ մարզերում համապատասխան մարզպետը, իսկ Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետը:

9. Մարզային ենթակայության հաստատությունների առանձին խորհուրդներում մարզպետն առաջադրում է խորհրդի 4 անդամ, որից երկուսին ներկայացնում է տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարը գրավոր ձևով մարզպետին, իսկ միացյալ խորհուրդներում մարզպետը առաջադրում է 5 անդամ, ընդ որում, կախված ուսումնական հաստատությունների թվից, մեկական անդամ ներկայացնում են տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարները գրավոր ձևով մարզպետին:

10. Երևանի քաղաքապետարանի ենթակայության հաստատությունների խորհուրդներում Երևանի քաղաքապետն առաջադրում է 4 անդամ:

11. Հաստատության մանկավարժական խորհուրդը իր կազմից փակ քվեարկությամբ ընտրում է խորհրդի (առանձին կամ միացյալ) 2 անդամ, ընդ որում նույն անձը չի կարող ընդգրկվել խորհրդի կազմում ավելի, քան 2 անգամ անընդմեջ:

12. Հաստատության ծնողական խորհուրդը իր կազմից փակ քվեարկությամբ ընտրում է խորհրդի (առանձին կամ միացյալ) 2 անդամ, ընդ որում նույն անձը չի կարող ընդգրկվել խորհրդի կազմում ավելի, քան 2 անգամ անընդմեջ:

Ինչպես տեսնում ենք նախարարությունը, մարզպետարանները, տիմ մարմիններն միասին ընտրում են կառավարման խորհուրդի 9-ը անդամներից 5-ին, իսկ դպրոցի մանկավարժական և ծնողական խորհուրդները 4-ին: Այս պարագայում հաշվի առնելով, որ պետության կողմից նշանակված անդամներն ունեն քանակական առավելություն նրանք ստանում են ակնհայտ գերիշխող դիրք և կարող են դպրոցում ստեղծել մի շարք խնդիրներ՝ սեփական նեղ խմբակային շահերի պաշտպանության նպատակով:

Մեր կարծիքով անհրաժեշտ է լրացնել այս բացը և հավասարակշռել կառավարման խորհրդում տարբեր մարմինների մասնակցության համամասնությունը:

Եզրակացություններ և առաջարկություններ

Հաշվի առնելով խորհրդակցական մարմիններում առկա վերոհիշյալ խնդիրները կրթության այս բնագավառում բարեփոխումների իրականացումը կարևոր և օրակարգային հարց է, ուստի հարկավոր է ձեռնարկել վճռական և կշռադատված քայլեր առկա խնդիրները վերացնելու և իրապես անկախ մարմիններ ստեղծելու համար: Առաջնային բարեփոխումները կարող են ընդգրկել հետևյալ հիմնական ուղղությունները.

ա. իրականացնել օրենսդրական բարեփոխումներ և ապահովել խորհրդակցական մարմինների ինքնուրույն ու թափանցիկ գործունեությունը,

բ. խորհրդակցական մարմիններին տալ առավել մեծ լիազորություններ և վերահսկողություն կրթադաստիարակչական գործընթացի նկատմամբ,

գ. բարձրացնել մանկավարժական խորհրդի դերը՝ այն վերածելով յուրատեսակ ուղեղային կենտրոնի

դ. ապահովել աշակերտական խորհրդի լիարժեք անկախ և ինքնուրույն գործունեությունը՝ դրանց աշխատանքում ընդգրկելով նաև տարատեսակ հասարակական կազմակերպություններից ներկայացուցիչների:

ե. Դպրոցում առողջ մթնոլորտի ձևավորման, բաց և թափանցիկ միջավայր կայացման, առկա խնդիրների իրական և հետևողական լուծման նպատակով չափազանց կարևոր է օրենսդրական ճիշտ քայլերով դպրոցի խորհուրդի աշխատանքի բարելավմանն ու առկա խնդիրների լուծմանն ուղված բարեփոխումների իրականացումը:

Օգտագործված էլեկտրոնային աղբյուրներ և տպագիր գրականություն

1. Օ Ր Ի Ն Ա Կ Ե Լ Ի Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ, https://www.arlis.am/documentview.aspx?docid=59769
2. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾԵԼԻՈՒԹՅՈՒՆ, ՄԱԿ մանկական հիմնադրամ, Երևան 2022:
3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻ https://www.irtek.am/views/act.aspx?aid=150065